ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Նկարում մթնոլորտի ո՞ր շերտն է նշված Գ տառով.**

1) արտաքին ոլորտը
2) ջերմոլորտը
3) ներքնոլորտը
4) վերնոլորտը



2 **Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.**

1) 1 : 420 000
2) 1 : 4 200 000
3) 1 : 4 200
4) 1 : 42 000

3 **Նկարում Դ կետի ազիմուտը հավասար է.**

1) 45°
2) 315°
3) 225°
4) 135°



4 **Հարավային բևեռային շրջագծի վրա բևեռային գիշեր լինում է.**

1) սեպտեմբերի 23–ին
2) դեկտեմբերի 22–ին
3) մարտի 21–ին
4) հունիսի 22–ին

5 **Ո՞ր պնդումն է սխալ.**

1) Քամիներն առաջացնում են ծովային հոսանքներ:
2) Քամիներն առաջացնում են ցունամիներ:
3) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:
4) Քամու միջոցով ստացվում է էլեկտրական էներգիա:

6 **Ըստ բարձրության օդի ջերմաստիճանը նվազում է, որովհետև.**

1) օդը տաքանում է Երկրի մակերևույթից
2) մեծանում է օդի խտությունը
3) մոտենում ենք սառցադաշտերին
4) մոտենում ենք օզոնի շերտին

7 **Գիշերվա և ցերեկվա, տարվա եղանակների, մակընթացության, տեղատվության հերթափոխը, գեյզերների պարբերական ժայթքումը բնութագրում են աշխարհագրական թաղանթի.**

1) կլիմայի չոր, խիստ ցամաքայնությունը
2) գոտիականությունը և զոնայականությունը
3) միասնականությունը
4) երևույթների ռիթմիկությունը

8 **Որքա՞ն է Արեգակի ճառագայթների անկման անկյան տարբերությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային (հս.լ. 42°10′) և հարավային (հս.լ. 37°20′) ծայրակետերի միջև.**

1) 15°
2) 5° 40′
3) 9° 30′
4) 4° 50′

9 **Նկարում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:**

1) ազիմուտային
2) կոնային
3) հասարակածային
4) գլանային



10 **Ըստ նկարի՝ ի՞նչ եղանակ է հյուսիսային կիսագնդում.**

1) Աշուն
2) ձմեռ
3) գարուն
4) ամառ



11 **«Լիճ - սնվող գետ» զույգերից ո՞րն է ճիշտ.**

1) Թանա — Կապույտ Նեղոս
2) Վիկտորիա — Զամբեզի
3) Նյասա — Կոնգո
4) Տանգանիկա — Սպիտակ Նեղոս

12 **Ի՞նչը բնորոշ չէ արկտիկական (անտարկտիկական) օդային զանգվածներին.**

1) բնորոշվում են փոքր խոնավությամբ և մեծ թափանցիկությամբ
2) բաժանվում են տաք և ցուրտ տարատեսակների
3) ձևավորվում են Արկտիկայի, Անտարկտիդայի և հարակից կղզիների վրա
4) բնորոշվում են ցածր ջերմաստիճանով

13 **Բնութագրումով որոշել թերակղզին.**

Այս թերակղզին Եվրասիայի հարավային մասում է: Աչքի է ընկնում սավաննային հարուստ բուսականությամբ ու կենդանական աշխարհով: Արևմուտքից ափերը ողողում է Անդամանյան ծովը, իսկ արևելքից՝ Հարավչինական ծովը: Ո՞ր թերակղզին է.

1) Հնդկաչին
2) Կորեական
3) Արաբական
4) Հինդուստան

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Լեռնահովտային քամիներն առաջանում են մայրցամաքների և օվկիանոս-ների միջև:
2) Պասսատները հասարակածից դեպի արևադարձեր փչող քամիներն են:
3) Գիշերային բրիզը փչում է ջրից դեպի ցամաք և առաջացնում է զովություն:
4) Պասսատները մշտապես փչում են նույն ուղղությամբ:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում առատ տեղումներ են թափվում:
2) Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա բաշխված է հավասարաչափ:
3) Արևադարձային լայնություններում հաստատվում է ցածր ճնշում:
4) Որքան փոքր է Արեգակի ճառագայթների անկման անկյունը, այնքան Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:

16 **Ո՞ր ծովերն են միմյանց միացած նեղուցով.**

1) Ադրիատիկ և Եգեյան
2) Կարիբյան և Բաֆինի
3) Ճապոնական և Արևելաչինական
4) Հյուսիսային և Նորվեգական

17 **Գործող հրաբուխներ են.**

1) Ջոմոլունգման և Մոնբլանը
2) Կամերունը և Էտնան
3) Էլբրուսը և Կազբեկը
4) Կիլիմանջարոն և Վինսոնը

18 **Ի՞նչն է պատճառը, որ Յանցզի գետը ձմռանը խիստ ծանծաղում է.**

1) Ձմռանը գետի ավազանում շատ քիչ տեղումներ են թափվում:
2) Ձմռանը ուժեղ քամիների հետևանքով մեծանում է գոլորշացումը:
3) Այն սնող ստորերկրյա աղբյուրները սառչում են:
4) Բնակչությունը ոռոգման համար շատ ջուր է օգտագործում:

19 **Քարտեզում Դ տառով ո՞ր օվկիանոսային հոսանքն է նշված.**

1) Մուսսոնային
2) Հյուսիսատլանտյան
3) Կուրոսիո
4) Օյասիո



20 **Քարտեզում Զ տառով ո՞ր գետն է նշված.**

1) Լենա
2) Անգարա
3) Կոլիմա
4) Օբ

21 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարվա ընթացքում հասարակածի վրա կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ 90° է:
2) Հունիսի 22–ին Արեգակի դիրքը հորիզոնի նկատմամբ ամենաբարձրն է հյուսիսային բևեռային շրջագծի վրա:
3) Հս. լ. 25° 30′–ի վրա տարվա ընթացքում կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ ցածր է 90°–ից:
4) Գիշերահավասարի ժամանակ՝ կեսօրին, Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ հարավային արևադարձի վրա 90° է:

22 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Տաք և սառը օդային զանգվածների հանդիպման շրջաններում հաճախակի առաջանում են հզոր պտտահողմեր, որոնց այստեղ կոչում են տոռնադո:
2) Մայրցամաքում ամենաշատ տեղումները դիտվում են Մեծ ավազան սարահարթի գոգավորություններում:
3) Արևմտյան քամիները մայրցամաք են ներթափանցում Խաղաղ օվկիանոսից, սակայն հանդիպելով Կորդիլիերների արևմտյան լանջերին՝ իրենց խոնավության մեծ մասը թափում են այնտեղ:
4) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքները առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի անկում:

23 **Երևանի հեռավորությունը հյուսիսային բևեռային շրջագծից կլինի.**

1) 3052,5 կմ
2) 3163,5 կմ
3) 2830,5 կմ
4) 2941,5 կմ

24 **Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Հյուսիսում տարածվում է Պադանի դաշտավայրը:
2) Կլիման մերձարևադարձային միջերկրածովային է:
3) Հարուստ է նավթի և բնական գազի պաշարներով:
4) Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան ծովի ջրերը:

25 **Դիագրամում տրված է բնակչության սեռային կազմը (մլն մարդ): Ո՞ր տարածաշրջանին է համապատասխանում 2 թիվը.**



1) Եվրոպային
2) Հյուսիսային Ամերիկային
3) Ասիային
4) Օվկիանիային

26 **Ժողովրդագրական անցման չորրորդ փուլին բնորոշ է բնական աճի կայունացումը: Այս փուլը համընկնում է.**

1) երկրների զարգացման արդյունաբերական փուլին
2) երկրների զարգացման հետարդյունաբերական փուլին
3) մինչկապիտալիստական ժամանակաշրջանին
4) «ժողովրդագրական պայթյունին»

27 **Այս կամ այն տարածքում բնակավայրերի տեղաբաշխումը չի լինում.**

1) համակենտրոնացված
2) շրջանաձև
3) համաչափ
4) գծային

28 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Կղզեխմբային պետություն է: Աշխարհում ամենամեծն է մահմեդականություն դավանողների թվով: Ո՞ր պետությունն է.

1) Սաուդյան Արաբիան
2) Ֆիլիպինները
3) Ճապոնիան
4) Ինդոնեզիան

29 **2010 թ. ՀՀ բնակչության թիվը կազմել է 3,263 մլն մարդ: Ժամանել է 900 մարդ, մեկնել՝ 3300 մարդ: Միգրացիայի ինտենսիվությունը հավասար կլինի մոտ.**

1) 0,07 %
2) 0,63 %
3) 0,13 %
4) 0,1 %

30 **Զարգացած երկրների մեջ առանձին ենթախումբ են կազմում արևմտաեվրոպական հին արդյունաբերական երկրները: Դրանցից չեն.**

1) Իսպանիան և Պորտուգալիան
2) Շվեյցարիան և Նորվեգիան
3) Ավստրիան և Բելգիան
4) Դանիան և Նիդերլանդները

31 **Դեպի Սև ծով ելք չունի.**

1) Բուլղարիան
2) Հունգարիան
3) Վրաստանը
4) Ռումինիան

32 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հրաբխային շրջաններում կառուցվում են երկրաջերմային էլեկտրակայան-ներ:
2) Համաշխարհային բեռնափոխադրումներում ամենամեծ բաժինն ունի երկաթուղային տրանսպորտը:
3) Քիմիական արդյունաբերությունն ունի անսպառ հումքային բազա:
4) Գերմանիայում մեքենաշինությունը տնտեսության մասնագիտացման ճյուղ է:

33 **«Պետություն — բնական ռեսուրսի հարուստ պաշար» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Նորվեգիա — նավթ
2) Շվեդիա — երկրաջերմային էներգիա
3) Իսլանդիա — քարածուխ
4) Ֆինլանդիա — բնական գազ

34 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ծանր գունավոր մետաղների ձուլման ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված են գիտական կենտրոնների մոտ:
2) Սև մետաղաձուլական ձեռնարկությունները տեղաբաշխվում են սպառման շրջանների մոտ:
3) Մետաղաձուլական ձեռնարկությունները բնապահպանական տեսակետից անվտանգ են:
4) Թեթև գունավոր մետաղների ձուլումն էներգատար արտադրություն է:

35 **Ձիթատու տեխնիկական մշակաբույսեր են.**

1) սոյան և արևածաղիկը
2) եգիպտացորենը և բրինձը
3) բամբակենին և ցորենը
4) կարտոֆիլը և ձիթապտուղը

36 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Օդային տրանսպորտը հիմնականում իրականացնում է բեռնափոխադրումներ:
2) Ցամաքային տրանսպորտը ներառում է երկաթուղային, ավտոմոբիլային, խողովակաշարային տեսակները:
3) Աշխարհի առևտրային նավատորմի առաջատարներ են Լիբերիան, Պանաման, Ճապոնիան և Հունաստանը:
4) Բեռնատար տրանսպորտի աշխատանքը բնութագրող ցուցանիշ է բեռնաշրջանառությունը:

37 **Արդյունաբերության ճյուղերից որի՞ տեղաբաշխման գործում է մեծ կոոպերացման դերը.**

1) քիմիական արդյունաբերության
2) սննդի արդյունաբերության
3) մետաղաձուլության
4) մեքենաշինության

38 **Ո՞ր երկու պետությունները չեն սահմանակցում Գերմանիային.**

1) Իտալիան և Հունգարիան
2) Շվեյցարիան և Չեխիան
3) Բելգիան և Դանիան
4) Լեհաստանը և Ավստրիան

39 **«Նավահանգիստ — ծով» զույգերից ընտրել *սխալը.***

1) Ստամբուլ — Մարմարա
2) Վլադիվոստոկ — Օխոտի
3) Մարսել — Միջերկրական
4) Սանկտ Պետերբուրգ — Բալթիկ

40 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Աշխարհի հնագույն պետություններից է, արևելյան քաղաքակրթության օրրանը: Երկրի ազգային փոքրամասնություններից են մոնղոլները, ույղուրները, մանջուրները, տիբեթցիները: Քաղաքային բնակիչների բացարձակ թվով այս պետությունն աշխարհում գրավում է առաջին տեղը: Երկրի ներկայիս զարգացման գործում մեծ դեր է խաղացել ազատ տնտեսական գոտիների ստեղծումը: Ո՞րն է այդ պետությունը.

1) Չինաստանը
2) Հնդկաստանը
3) Ճապոնիան
4) Ինդոնեզիան

41 **Արևելյան Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

1) Տարածաշրջանի բերրի հողերը և ագրոկլիմայական պայմանները նպաստավոր են գյուղատնտեսության զարգացման համար:
2) Անասնապահության առաջատար ճյուղը ոչխարաբուծությունն է:
3) Էլեկտրաէներգետիկայի գերակշիռ մասն արտադրվում է ջերմաէլեկտրակա-յաններում:
4) Ռուսաստանում և Ուկրաինայում զարգացած է սև մետաղաձուլությունը:

42 **Պարսիկներից հետո Իրանի խոշոր ազգություններն են.**

1) ադրբեջանցիները և քրդերը
2) աջարները և արաբները
3) թուրքերը և հայերը
4) աֆղանները և վրացիները

43 **Ո՞ր շարքի լեռնագագաթներն ունեն 3500–4000 մ բարձրություն.**

1) Քաջքար, Փոքր Մասիս, Աժդահակ
2) Սիփան, Սրմանց, Նեմրութ
3) Արսիան, Սուկավետ, Նեմրութ
4) Ջիլո, Սավալան, Սիփան

44 **«Գետ — հոսքի ավազան» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Տիգրիս — Կարմիր ծով
2) Արաքս — Սև ծով
3) Ճորոխ — Կասպից ծով
4) Եփրատ — Պարսից ծոց

45 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Կարսի և Աշոցքի սարահարթերում օդի ջերմաստիճանը – 30°C–ից ցածր չի իջնում:
2) Հայկական լեռնաշխարհում արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ տեղումների քանակն ավելանում է:
3) Հայկական լեռնաշխարհում կլիմայական տարբերություններ առաջացնող ամենակարևոր գործոնը լեռնային բարդ ռելիեֆն է:
4) Միջնաշխարհում ձմեռը կարճատև է և սակավաձյուն:

46 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Կոտայքի և Ապարանի սարահարթերում տարածվում են աղուտ–ալկալի հողերը:
2) ՀՀ անտառային գոտու ցածրադիր տեղամասերում տիրապետում են լեռնային սևահողերը:
3) Շիրակի և Լոռվա դաշտերում տարածվում են լեռնային սևահողերը:
4) Արարատյան դաշտում առավելապես տարածված են լեռնաշագանակագույն հողերը:

47 **Ընտրել «մարզ – էլեկտրակայան» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. Կոտայք	ա. Հայկական ատոմակայան
2. Արմավիր	բ. Շամբի
3. Լոռի	գ. Գյումուշի դ.
4. Սյունիք	դ. Զորագետի

1) 1–ա, 2–բ, 3–գ, 4–դ
2) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
3) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
4) 1–դ, 2–ա, 3–բ, 4–գ

48 **Ո՞ր շարքում տրված արդյունաբերության բոլոր ճյուղերն են Սյունիքի մարզի համար առաջատար.**

1) սև մետաղաձուլությունը, անտառային արդյունաբերությունը
2) քիմիական արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը
3) գունավոր մետաղաձուլությունը, էլեկտրաէներգետիկան
4) հանքային ջրերի արտադրությունը, քիմիական արդյունաբերությունը

49 **Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարածքի բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:
2) Արևելքից սահմանակից է Արարատի մարզին:
3) Սյունիքի մարզի հետ կապված է Որոտանի լեռնանցքով:
4) Մարզի տարածքում հայտնաբերվել են երկաթաքարի հարուստ հանքավայրեր:

50 **Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված Գ տառով.**

1) Կարկտասար
2) Մուրղուզ
3) Չաթինլեռ
4) Քաշաթաղ

51 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Է տառով.**

1) Սևան
2) Գավառ
3) Ճամբարակ
4) Մարտունի

52 **Երևանի օդային ավազանը գերազանցապես աղտոտում է (են).**

1) ավտոմոբիլային տրանսպորտը
2) ջերմաէլեկտրակայանները
3) քիմիական արդյունաբերությունը
4) գունավոր մետաղաձուլությունը

53 **Տրված զույգերից որի՞ երկրներն են առավել հարուստ ջրաէներգետիկ ռեսուրսներով.**

1) Գերմանիա և Ֆրանսիա
2) Նորվեգիա և Շվեդիա
3) Չեխիա և Լեհաստան
4) Իսպանիա և Իտալիա

54 **Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» զույգերից ընտրել ճիշտը.**

1) երկրաջերմային ռեսուրս — անսպառ
2) հանքային ռեսուրս — սպառվող–վերականգնվող
3) կենսաբանական ռեսուրս — անսպառ
4) կլիմայական ռեսուրս — սպառվող–վերականգնվող

55 **Բնական և մարդածին այն օբյեկտները, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազդուրիչ նշանակություն և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար, կոչվում են.**

1) ռեկրեացիոն ռեսուրսներ
2) սպառվող–վերականգնվող ռեսուրսներ
3) գյուղատնտեսական հողահանդակներ
4) ագրոարդյունաբերական համալիրներ

56 **Գրել այն հրաբուխների համարները, որոնք խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալի սահմաններում են.**

1) Կոտոպախի
2) Վեզուվ
3) Հեկլա
4) Կամերուն
5) Կլյուչևսկայա սոպկա
6) Օրիսաբա
7) Դեմավենդ
8) Էտնա

57 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.**

1) Նիգեր
2) Սիրդարյա
3) Մուրեյ
4) Ինդոս
5) Մեկոնգ
6) Զամբեզի
7) Տիգրիս
8) Օրանժ

58 **Գրել այն ապարների համարները, որոնք ունեն փոխակերպային ծագում.**

1) գրանիտ
2) խճաքար
3) կերակրի աղ
4) կվարց
5) մարմար
6) կավիճ
7) տուֆ
8) գնեյս

59 **Գրել այն երկրների համարները, որոնք թերակղզային են.**

1) Իտալիա
2) Սաուդյան Արաբիա
3) Արգենտինա
4) Ճապոնիա
5) Նիգերիա
6) Բելգիա
7) Կոլումբիա
8) Ֆրանսիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Ֆրանսիա
2) Գերմանիա
3) Կանադա
4) Ռուսաստան
5) Իրան
6) Վրաստան
7) Չինաստան
8) Պակիստան

61 **Գրել այն բնակավայրերի համարները, որոնք Գեղարքունիքի մարզում չեն.**

1) Սոթք
2) Բյուրեղավան
3) Ճամբարակ
4) Սևան
5) Հրազդան
6) Մարտունի
7) Դիլիջան
8) Վարդենիս

62 **Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով.**

1) Բանգլադեշ
2) Չինաստան
3) Ինդոնեզիա
4) Հնդկաստան

63 **Հայկական լեռնաշխարհի տրված լեռնաշղթաների համարները դասավորել ըստ դրանցից սկիզբ առնող գետերի ակունքների՝ Արածանի, Արևմտյան Եփրատ, Արաքս.**

1) Ծաղկանց 2) Բյուրակն 3) Ծաղկավետ

(64-65). Երկրի բնակչության թիվը 18 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 13,5 մլն, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 450 000.

64	Որոշել ուրբանիզացման մակարդակը:

65	Որոշել ծնելիության գործակիցը (‰):

(66-67). Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են –1˚, –4 ˚, –6 ˚, –2 ˚, +7 ˚, +16˚, +10˚, +4˚ ցուցանիշները.

66 Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

67 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

68 Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 840 000 ց, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 24000 հա: Որքա՞ն է բրնձի միջին բերքատվությունը:

69 **Բնական զոնաների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
2) Սնահողերը մեծ տարածում ունեն Ավստրալիայում:
3) Աշխարհագրական գոտին բնական զոնայի մի մասն է:
4) Բնական զոնաների հերթափոխը լեռներում կոչվում է վերընթաց գոտիականություն:
5) Բառբաբը և շշածառը տարածված են հասարակածային մշտադալար, խոնավ անտառների բնական զոնայում:
6) Շյուղախոտը, փետրախոտը և երեքնուկը բնորոշ են տափաստանների բնական զոնային:

70 **Աշխարհի բնակչության ազգային կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է ազգերի միաձուլում:
2) Աշխարհում խոշորագույն լեզվաընտանիքը հնդեվրոպականն է:
3) Բնակչության ազգային և կրոնական կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
4) Բնակչության ազգային և լեզվական կազմերը աշխարհի առանձին տարածաշրջաններում չեն համընկնում:
5) Ազգի հատկանիշներից են լեզվի, հոգևոր մշակույթի և հոգեբանական խառնվածքի ընդհանրությունը:
6) Ազգն ունի ազգությանը բնորոշ հատկանիշներ, սակայն սոցիալ-տնտեսական զարգացման ավելի ցածր աստիճանի վրա է, քան ազգությունը: